ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

«ՇՔԵՂԱՐՈՒԵՍՏ ՀՈՅԱԿԱՊ ՏԵՍԱՆԻ ՃԵՄԱՐԱՆ, ՈՒՍՏԻ ՅՈՒՍԱՄՔ ՎԱՅԵԼԵԼ ՁՓՐԿԱՒԷՏ ԳԱՆՁՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ»

Այս խօսքերը գրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի առաջին սաներից մէկը: Գրել է յոյսով, հաւատով, սիրով, սպասումով... Հիմա նաեւ կարող ենք փաստել՝ գրել է մարգարէաբար... «գիտութեան փրկաւէտ գանձերի մասին»: Իրապէս, ի՞նչ էր, եթէ ոչ փրկութեան օղակ՝ հային, շուրջբոլորը մոլեռանդօրէն բազմապատկուող խաժամուժից զատող ու պատսպարող անառիկ մի զէնք: Մենք այլ, աւելի հատու, աւելի ազդու միջոց չենք ունեցել ու չունենք, քան մտաւոր ներուժը:

ԺԹ. դարի վերջին քառորդը ամենեւին չէր տարբերւում մեր պատմութեան որեւէ այլ ժամանակաշրջանից՝ վաչկատունների կողմից կազմակերպուած, թէ անկազմակերպ՝ աւէր ու աւար, կողոպուտ ու ասպատակութիւն: Ազգի գոյատեւմանը, հայու տեսակին սպառնացող մշտական վտանգները երբեք չեն դադարել կրնկակոխ հետապնդել մեզ: Իսկ Մայր Աթոռում, չնայած այդ ամենին, իսկ աւելի ճիշտ՝ ի պատասխան այդ ամենի, 1860-ականներից սկսեալ, զօրանում ու յստակ կերպարանք էր առնում հոգեւոր բարձրագոյն դպրոց հիմնելու գաղափարը: Յատկանշական է, որ ապագայ Ճեմարանի տեղն ընտրելիս Գէորգ Դ. Ամենայն Հայոց Հայրապետը երկընտրանքի առջեւ գրեթէ չկանգնեց, համոզուած էր՝ այն պէտք է լինէր Վաղարշապատում, Մայր Աթոռում:

Ս. Մաշտոց ու Ս. Սահակ երանելիների սխրանքից յետոյ, երբ հաստատապէս, Աստծու օգնութեամբ-օժանդակութեամբ-օրհնութեամբ արարեցին-կերտեցին հայոց այբուբենը, հոգեւոր հայրերը՝ Հայ Եկեղեցու հովանու ներքոյ, աներկբայօրէն, անվարան իրենց նախանձախնդիր պահանջկոտութեամբ ու սկզբունքներով, գորովանքով ու նուիրումով իրականացրել ու իրականացնում են ամենապատասխանատու առաքելութիւնը, կրում են ամենապատուաբեր խաչը՝ ապահովում են ուսեալ սերունդների անխզելի փոխկանչը: Երկու երանելիների սխրանքից յետոյ, ու այդուհետ՝ միշտ, իւրաքանչիւր եկեղեցի, մատուռ, վանք ու վանական համալիր կրթութեան ու գիտութեան լոյսի

ակութ դարձաւ: Դարձաւ ազգային արժէքների ու դիմագծի պահպանման, հայեցի դաստիարակութեան անառիկ ամրոց: Դարձաւ գառների հօտին անվրէպ առաջնորդող փարոս, փարախ ու խարիսխ՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Անշուշտ, համալսարանը մեր իրականութեան մէջ ունեցել է իր փայլուն նախադէպերը՝ Գլաձոր, Տաթեւ, Սիս, Հռոմկլա: Հաստատութիւններ, որոնք եւրոպական համաժամանակեայ ու համանման կառոյցներից շահեկանօրէն տարբերւում էին մէկ շատ կարեւոր առաւելութեամբ, թէեւ օտար դասական լեզուներ ուսուցանւում էին, սակայն կրթութիւնն իրականացւում էր հայերէն՝ մայրենի լեզուով: Ուրեմն, կար այն փորձառութիւնը, հենքը, որ անկիւնաքարը պիտի լինէր նոր ձեռնարկի, որի կենսունակութեան ու տեւական կեանքի համար, համոզուած եմ, աղօթում էին ազգովին:

«Արարատ» հանդէսի 1874 թ. սեպտեմբերեան համարում մանրամասն նկարագրուած է բացման հանդիսաւոր արարողութիւնը, որը համընկել է Գէորգ Դ. Հայրապետի անուանակոչութեան տօնին: Այն իրապէս համազգային ցնծութեան էր վերածուել. ներկայացուցիչներ կային բոլոր թեմերից ու վիճակներից: Նրանք, որոնք անկարող էին բաղձալի արարողութեան մաս կազմել, շնորհաւորական հեռագրեր էին ուղարկել:

Աւանդաբար՝ հիմնադրման պահից, Ճեմարանը եղել է Ամենայն Հայոց Հայրապետների ուշադիր ու պահանջկոտ հոգածութեան կենտրոնում: Նոյնն է նաեւ հիմա ու այդպէս կը լինի մի՛շտ:

Կոնդակներից մէկում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ.-ն ընդգծում էր. «Երանի այնոցիկ, որք գիտեն ի կենցաղումս բարեգործութեամբ իւրեանց թողուլ զարժան անմոռանալի յիշատակաց ի սիրտ ապագայ սերնդեան...»: Մէկն էր բազում երանելիներից, որ երախտապարտ սերունդների յիշողութեան մէջ մնաց ազգօգուտ գործերով, անմոռանալի յիշատակներով, որ մէկ բնութագրմամբ բարենորոգչական ենք յորջորջում, իսկ որքան ջանք, խորհուրդ, խորք ու խորութիւն կայ այդ եզրոյթի մէջ:

«Մեր սրբազան տաճարների, կանթեղների լոյսը մշտավառ է շնորհիւ Գէորգեան հոգեւոր ճեմարանի: Այսօր հպարտ ենք այն աւանդով, որ Ճեմարանը, Աստծու օրհնութեամբ, բերել է հոգեւոր ու ազգային մեր կեանքում: Այստեղ դասաւանդեցին ու Ճեմարանի հոգեւոր անդաստանը ծաղկեցրին մեծանուն մտաւորականներ ու հոգեւորականներ... սերունդները յաջորդեցին միմեանց ու իրենց անունները դարերին պահ տալով՝ անցան մշտնջենութեան, իսկ նրանց գործը շարունակուեց, շարունակւում է եւ միշտ կշարունակուի: Նայելով տարիների հեռուից՝ տեսնում ենք, որ Գէորգեան հոգեւոր ճեմարանը ինչպէս նկանակ բաժանուեց, բաշխուեց, հասաւ աշխարհի հեռաւոր անկիւններում ապրող մեր ժողովրդի զաւակներին, յագեցրեց կա-

ոստեալների հոգեւոր ծարաւն ու քաղցը, բայց չպակասեց երբէք, այն առաւել զօրացաւ ու պայծառացաւ եւ այսօր մեր անկախ պետականութեան հովանու ներքոյ պիտի լոյս տայ մեր ժողովրդի ազատ կեանքի նոր յոյսերին: Մենք բոլորս ջանում ենք, որ պայծառ մնայ Ճեմարանի հոգեւոր անդաստանը եւ նրա յարկից իրենց քայլերն սկսող մեր զաւակները՝ հաւատքի զինուորները, Աստծու խօսքով սրբեն ու առաջնորդեն մեր ժողովրդի կեանքը դէպի աստուածախնամ, աստուածօրհնեալ կեանքի ափեր: Փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ աճեցրեց ու կենսատու պահեց հոգեւոր մեր այս տունը, մեր բոլորի միշտ սիրելի, միշտ նուիրական Գէորգեան հոգեւոր ճեմարանը», - հիմնարկէքից 140 տարի անց, հոգեւոր հայրերի մի քանի սերնդի ու նաեւ մերօրեայ ջանքերով կերտուած սրբատաշ Տունը այսպէս բնութագրեց ու արժեւորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի յոբելենական հանդիսութեանը իր ջերմ ողջոյնն էր բերել Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Մօր Իգնատիոս Եփրեմ Երկրորդը:

Հայ Եկեղեցու պատմութեան վաւերագրերի ամենամակերեսային ուսումնասիրութիւնը վկայում է, որ բարձրագոյն դպրոցի հիմնադրման հէնց սկզբից յստակ էին չափորոշիչները, որոնցով պէտք է առաջնորդուէին աշակերտներին ընտրելիս: Նրանք պէտք է գիտենային քերականութիւն, Հին ու Նոր Կտակարաններ, ազգային ու ընդհանուր համառօտ պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն: 14-16 տարեկան պատանիները պէտք է լինէին մկրտուած, փափկաձայն, ուշիմ, «բարի վարքով», աշխատասէր, առողջակազմ, հոգեպէս պատրաստ պաշտօնավարութեան:

Ա.-Թ. դասարաններում սաները մայրենիից բացի ուսումնասիրում էին նաեւ յունարէն, լատիներէն, եբրայեցերէն, գաղիերէն, ինչպէս եւ իմաստասիրութիւն, աստուածաբանութիւն, ձայնագրութիւն, բնագիտութիւն, պատմութիւն, նկարչութիւն: Պատահական չէ, որ այս հաստատութեան ներսում, ժամանակի համար անթերի ուսումնական ծրագրերով ու առարկայական ցանկով, կերտուեց մտաւոր սերուցքը, հոգեւորականների, հայագէտների, արուեստագէտների փայլուն փաղանգը, որը Հայոց նոր շրջանի պատմութեան շեշտուած, վառ գործիչների աստղաբոյլ դարձաւ: Դարձաւ սերմնացանների այն նոր սերունդը, որ լիաբուռ պիտի տարածէր, սփռէր հայ դպրութեան կենարար լոյսը, քանզի ասուած է եւ ստոյգ՝ «մարդ ոչ ուսեալ՝ կորուսեալ է»:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի վերջին 30 տարուայ տեսուչները... այդքան տարբեր, բայց նաեւ նման մէկ յատկանիշով. նրանք լծուել ու անմռունչ իրականացրել են իրենց առաքելութիւնը՝ միանգամայն տարբեր պայմաններում, տարբեր հասարակարգերում, տարբեր իրավիճակներում, սակայն միշտ գործի կարեւորութիւնը լաւ գիտակցելով. «Սիրում եմ գործս, սաներին:

Երազում եմ նրանց տեսնել Եկեղեցու ծառայութեան ծիրում, որ Ս. Էջմիածինը նրանց համար կեանք դառնայ», - ասում է նախկին տեսուչներից մէկը՝ Տէր Եղիշէ աւագ քահանայ Սարգսեանը, ծերունազարդ մի հոգեւորական, որ շատ լաւ գիտէ, թէ ինչպէս է լինում անանձնական, անմնացորդ նուիրումը, որ տեւում է... ողջ մի կեանք...

Գէորգեան ճեմարանի 1980-1989 թթ. տեսուչ Եզնիկ արք. Պետրոսեանը նկատում է, թէ առաջին հայեացքից Ճեմարանը Հայ Առաքելական Եկեղեցու ամուր կառոյցի օղակներից մէկն է ընդամէնը, սակայն միակը, որի հետ առընչւում է մնացած բոլորի կանոնաւոր գործունէութիւնը: Ուրեմն՝ անկիւնաքարն է, կառոյցը ամուր պահող յենասիւներից մէկը:

Յընթացս յոբելենական հանդիսութեան՝ Հոգեւոր ճեմարանի մերօրեայ տեսուչը՝ Գէորգ եպս. Սարոյեանը, շեշտում է. «Այս նուիրական պահին պատուի եւ հպարտութեան զգացումն է պարուրում մեր սրտերը, երբ նայում ենք անցած 140 տարիներին, երբ ժապաւէնի նման վերակենդանանում են մեր մտապատկերում մի կողմից անյոյս թուացող դժնի ժամանակները, իսկ միւս կողմից՝ գաղափարի հերոսները, պայծառ հոգիներ, որոնք, բանաստեղծի խօսքերով ասած, իրենց մահացու ուղին չխառնեցին արահետներին: Նրանց անցած ճամփան մեզ սովորեցնում է ոչ միայն հաւատալ մեր տեսիլքին, այլեւ դարձնել այն կամք եւ գիտակցութիւն»: Այո՛, հաւատն է, որ տեսիլքը իրականութիւն է դարձնում՝ շօշափելի, իսկ իրականութիւնը՝ տեսիլքի չափ առինքնող:

Յիրաւի, հաւատից բացի ուրիշ ի՞նչ ունէինք, երբ 1874-ին փորձում էինք բարձրագոյն դպրոց հիմնել, մինչդեռ, մեր պատմական հայրենիքը մահասարսուռ ուրուականների խելայեղ պարի, գիշատիչների խնջոյքի անընդգրկելի տարածքի էր վերածուել, իսկ տեսանելի ապագայի գոյներն աւելի խտացածմռայլ էին: 1944-ին, մարտնչող անաստուածների երկրում, աշխարհը պարուրած մահաբօթ պատերազմի պահին, հաւատից բացի ուրիշ ի՞նչ ունէինք, երբ վերաբացուեց Գէորգեան ճեմարանը: 1990-ականներին հաւատից բացի ուրիշ ի՞նչ ունէինք, երբ Արարատեան Հայրապետական թեմի փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոսը ձեռնամուխ եղաւ Սեւանայ թերակղզում հոգեւոր մի նոր կրթարանի՝ Վազգէնեան դպրանոցի հիմնադրմանը: Նորանկախ երկիրը ընկղմուած էր թանձր խաւարի մէջ, որը, թւում էր, թէ ցրել ոչ ոք չի կարողանայ: Եւ ինչպէս պատահում է նման դէպքերում, ամենախոցելի ու անպաշտպան վիճակում յայտնուեցին ուսումնական, գիտական հաստատութիւնները: Փլուզւում էր կրթութեան նախկին համակարգը, եւ նորի մասին պատկերացում ոչ ոք չունէր: Ու ժամանակ էլ չունէին պատկերացում կազմելու համար: Պատերազմ էր: Այս պայմաններում հոգեւոր նոր կրթարանի ստեղծման մասին լուրը զարմանքից զատ, զարմանքից շատ՝ թերահաւատութեան ալիք

առաջացրեց լրագրողների շրջանում՝ անհնարին, անիրագործելի ծրագիր է: Սեւանի թերակղզի այցից յետոյ թերահաւատութիւնը ամուր համոզմունքի փոխուեց: Գաղափարից, տեսլականից ոգեշնչուած Գարեգին արքեպիսկոպոսը ցոյց էր տալիս հաստատութեան ուսումնական, հանրակացարանային շէնքերի նախագծերը՝ ճարտարապետական ինքնատիպ լուծումներով... իսկ թերակղզում... ֆիզիկապէս մաշուած միակ շինութիւնը ծառայում էր իբրեւ լսարան, կացարան, ընթերցասրահ, սեղանատուն: Իսկ թերակղզում... Վազգէնեան դպրանոցի առաջին սաներն էին՝ անբեղ-անմօրուս, որ եկել էին հաւատով, յանուն հաւատքի... այսօր նրանք մեր Եկեղեցու հոգեւոր հայրերի շարքում են՝ խոհուն, ուսեալ, բանիմաց, քաջատեղեակ (թերեւս խորհրդանշական է, որ Սեւանի Դպրանոցն է աւարտել նաեւ Մայր Աթոռի բարձրագոյն հոգեւոր-կրթական հաստատութիւնների ներկայիս վերատեսուչ՝ Գէորգ եպս. Սարոյեանը): Նրանք սահմաններն անառիկ պահող զինուորներ են, աշխարհի բոլոր ծագերում հայապահպանութեան մարտահրաւէրները ընդունող ու չերկնչող, հայորդեաց ոգիներն անաղարտ պահող մեր հոգեւորականները...

Այսօր Ճեմարանում կրթութիւն են ստանում երիտասարդներ, որոնք ծնուել են իրենց պատմական հայրենիքից հեռու՝ օտար ափերում, հասակ են առել այլ միջավայրում եւ Մայր Աթոռում ուսումնառութիւնն սկսել են մայրենիի տառերը, ամենապարզ բառերը թոթովանքով սերտելով... Վաղը նրանք հայապահպանման, հայեցի դաստիարակութեան, անկորնչելի արժէքների փոխանցման կարեւոր ու պատասխանատու գործառոյթը կիրականացնեն պատուով ու արժանապատուութեամբ:

«Այս նշանակալի իրադարձութիւնը տօն է ինչպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան, բոլոր ժամանակների ճեմարանականների, այնպէս եւ ողջ հայութեան համար, քանի որ Գէորգեան հոգեւոր ճեմարանն է անդրանիկը՝ հայրենիքում գործող բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների... ՀՀ կառավարութեան որոշմամբ՝ ՀՀ ԿԳ նախարարութիւնը 2002 թ. Գէորգեան հոգեւոր ճեմարանին շնորհեց բարձրագոյն ուսումնական հաստատութեան կարգավիճակ՝ որպէս աստուածաբանական համալսարան», - իր շնորհաւորական ելոյթում ասաց ՀՀ ԿԳ նախարար Արմէն Աշոտեանը:

Գէորգեան հոգեւոր ճեմարանը մեր հնագոյն բարձրագոյն կրթական հաստատութիւնն է ու միշտ կլինի այդպիսին՝ անուրանալի նուաճումներով ու յաջողութիւններով իմաստնացած ու պարտաւորուած: Պարտաւորուած, որ պէտք է առաջնորդի մեր ժողովրդի գալիք հազարամեակների երթը՝ իբրեւ ռահվիրայ, իբրեւ առաջնեկ, իբրեւ ջահակիր: